



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 13 » 06 2018 թ.

N 424-ՉԿ

ք. Երևան

**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԵՎ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարի տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» թիվ 272-Ն որոշման N1 հավելվածի 1-ին կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝ ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման ձևակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ Արփենիկ Սարգսյանին նշանակել ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱԿՈՒԲՅԱՆ

« 13 » 06 2018 թ.
ք. Երևան

ԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց նշանակում է իրավասու մարմնի ղեկավարը՝ հաշվի առնելով իրավասու մարմնի կառուցվածքային առանձնահատկությունները:

2. Իրավասու մարմինը հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց տվյալները տեղադրում է իր կայքէջում, կայքէջի բացակայության դեպքում՝ իր օգտին աշխատանք կատարող կամ իր կողմից մատուցվող ծառայություններից օգտվող յուրաքանչյուր անձի համար տեսանելի վայրում:

3. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված ժամկետներում հաղորդումները պատասխանատու անձի կողմից հաշվառվում են գրանցամատյանում (ծև N 1)՝ համապատասխան գրառման կատարմամբ: Գրանցամատյանում հաշվառվում են նաև այն հաղորդումները, որոնք ներկայացվել են ոչ իրավասու մարմին, և վերջինս այն օրենքով սահմանված կարգով վերահասցեագրել է իրավասու մարմնին:

4. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

- 1) հաղորդման հաշվառման հերթական համարը.
- 2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
- 3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.
- 4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
- 5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը.
- 6) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.
- 7) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
- 8) ազդարարի ստորագրությունը.
- 9) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.
- 10) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:

5. Պատասխանատու անձը համարակալում, ստորագրում, իսկ փաստաթղթային տարբերակով վարման դեպքում՝ նաև կնքում է գրանցամատյանի բոլոր էջերը:

6. Պատասխանատու անձը վարում է գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը:

7. Հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները:

